«ԲԼԵՋԱՆ»
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,
ԲԻԶՆԵՍԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԿ

“BLEJAN”
ECOLOGICAL, SOCIAL,
BUSINESS SUPPORT NGO

Հասցե. ՀՀ, ք. Գավառ, Դաշտոյան 1-ին նրբանցք, տուն 16
Հեռ. (0264) 2-11-57, բջջ. (077) 76 46 41
Web: www.blejan.org
Էլ. Փոստ. blejanli@gmail.com, info@blejan.org

Address.RA,Gegharkunikmarz,Gavar,Dashtoyanst.1/16
Tel.:+374 264 2 11 57, mob: +374 77 76 46 41
E-mail: blejanli@gmail.com

ԲԼ–Գ–001 08.01.2019

Բնապահպանության և ընդերքի տեսչական
մարմնի ղեկավար Արթուր Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան

Դեկտեմբերի 17-ին Գեղարքունիքի մարզպետարանում տեղի ունեցավ հերթական աշխատանքային խորհրդակցությունը՝ Սևանա լճում սիգ ձկան որսի արգելքի ժամկետների հետ կապված, որին մասնակցում էին ՀՀ բնապահպանության նախարարության, «Սևան» Ազգային պարկի, ՀՀ ընդերքի և բնապահպանական պետական տեսչության, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության, մարզպետարանի բնապահպանության և գյուղատնտեսության վարչության ներկայացուցիչներ, Սևանա լճի ափամերձ համայնքների ղեկավարներ:

Հիշեցնեմ, որ 2005թ-ից ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով արգելված է Սևանա լճում արդյունագործական ձկնորսությունը, բայց չգիտես ինչու արդեն շուրջ տասներեք տարի՝ ամեն տարվա վերջին, ՀՀ բնապահպանության նախարարը նոր հրաման է ստորագրում՝ սիգի ձվադրման շրջանի պատճառաբանությամբ արգելելով իր հրամանով դեռևս 2005-ից ընդհանրապես արգելված ձկնորսությունը:

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Ոստիկանությունը, Բնապահպանության նախարարությունը՝ ի դեմս «Սևան» Ազգային պարկի և Գեղարքունիքի մարզպետարանը, համաձայն համատեղ գործողությունների ծրագրի, դեկտեմբերի 20-ից հունվարի 20-ն ընկած ժամանակահատվածում պետք է իրականացնեն ուժեղացված ռեժիմով հսկողություն՝ Սևանա լճում ապօրինի որսը կանխարգելելու համար: Այո՛, Սևանա լճում և ոչ թե շուկաներում:

Եթե ձուկը ջրից դուրս է հանվել, արդյո՞ք անիմաստ չէ շուկաներում ձուկ վաճառողներին տուգանելն ու բերման ենթարկելը:

Ոչ մի տարի, այս տարին ևս բացառություն չէ, այդ արգելքը չի գործել և չի գործում: Երևանի ու մարզերի թույլատրելի և ոչ թույլատրելի շուկաներում մեծ քանակով վաճառվում է սիգ ձուկը: Առավոտյան վաղ մայրուղով անցնելուց լճի վրա կարելի է հաշվել անթիվ ու անհամար նավակներ, ինչը վկայում է, որ ոչ մի լողամիջոց ու որսագործիք էլ դուրս չի բերվել լճից:

Հարգելի պարոն Գրիգորյան

Դիմում ենք ձեզ պահանջով և խնդրանքով՝

1. ստուգումներ սկսել՝

- ուսումնասիրելու «Սևան» Ազգային պարկի հետ ձկնորսների պայմանագրերի առկայությունն ու դրանց բովանդակությունը,
- պարզելու լիճ մտնող բոլոր օրինական և ոչ օրինական նավակների թիվը, որսի թույլատրելի քանակներն ու որսագործիքների տեսակները (ոչ միայն սիգի),
- պարզելու սիգի արդյունագործական որսի արգելքի իրական հիմքերն ու ժամկետները

2. շուրջօրյա հսկողություն սահմանել ոչ թե ՀՀ շուկաներում, այլ լճի ափերին, որովհետև գտնում ենք, որ եթե ձուկը ջրից հանվել է, այն միևնույնն է՝ պետք է վաճառվի:

Կանխավ շնորհակալ եմ

Հարգանքով՝

ՀԿ նախագահ Լիաննա Ասոյան

Նամակին միացել են նաև՝

1) Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն ՀԿ-նախագահ՝ Սաթիկ Բաղեյան, ք. Սևան
2) Մարտունու կանանց համայնքային խորհուրդ ՀԿ-նախագահ՝ Անահիտ Գևորգյան,
3) ք. Մարտունի
4) Մարտունու «Տաթև» մարզական մշակութային և ձեռարվեստների ՀԿ- նախագահ՝

Տաթևիկ Գրիգորյան, ք. Մարտունի

5) ‹‹Բիոսոֆիա›› առողջապահության, բնապահպանության և գյուղատնտեսության զարգացման կենտրոն ՀԿ-նախագահ՝ Գևորգ Պետրոսյան, ք. Գյումրի
6) «Թռչնասերների կենտրոն» ՀԿ-նախագահ՝ Սիլվա Ադամյան, ք. Երևան
7) «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ-նախագահ՝ Գոհար Օգանեզովա, ք. Երևան
8) «Բաց սահմաններ» ՀԿ—Նախագահ՝ Էլեոնորա Բոգոյան, գ. Նորատուս
9) Համայնքների զարգացնում և քաղաքացիական հասարակություն ՀԿ-Նախագահ՝ Արմեն Հովհաննիսյան, գ. Վարդենիկ
10) «Սևան» երիտասարդական ակումբ ՀԿ-Նախագահ՝ Գոհար Մնացականյան ք.Սևան